ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 նոյեմբերի 2018թ. թիվ 368-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի Ն 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «իզ» կետի և հաշվի առնելով «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի 24.10.2018թ. թիվ 1543 և 14.11.2018թ. թիվ 1596 գրությունները՝

Ո ր ո շ ու մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2018թ. հունվարի 15-ի «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բժշկական օգնության և սպասարկման վճարովի ծառայությունների գները հաստատելու մասին» թիվ 10-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. «Ախտորոշիչ գործիքային հետազոտություններ» մասում՝

1) հանել «36»-րդ տողը,

2) 72-րդ տողում «10 000» թիվը փոխարինել «15 000» թվով,

3) ավելացնել նոր՝ 80 և 81 տողեր.

80.	ֆոլիկուլոմետրիա	8 000
81.	ներհեշտոցային սոնոգրաֆիկ հետազոտություն	6 000

2. «Կոմպյուտերային տոմոգրաֆիկ հետազոտություններ» մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «Կոմպյուտերային տոմոգրաֆիկ հետազոտություններ» բառերը փոխարինել «Համակարգչային տոմոգրաֆիկ հետազոտություններ՝ առանց կոնտրաստային նյութի» բառերով:

2) 2-րդ տողում «25 000» թիվը փոխարինել «20 000» թվով,

3) 8-րդ տողում «25 000» թիվը փոխարինել «20 000» թվով,

4) 10-րդ տողում «25 000» թիվը փոխարինել «30 000» թվով,

5) ավելացնել նոր՝ 13-րդ տող.

13.	երկու հատվածների միաժամանակյա ոչ կոնտրաստային հետազոտություն	1 հետազոտություն	45 000

6) մասից հանել «* Կոնտրաստային նյութի գինը չի մտնում հետազոտության արժեքի մեջ» տողը:

3. «Կոմպյուտերային տոմոգրաֆիկ հետազոտություններ» մասից հետո հավելվածը լրացնել նոր՝ «Համակարգչային տոմոգրաֆիկ հետազոտություններ կոնտրաստային նյութով» մասով.

	Համակարգչային տոմոգրաֆիկ հետազոտություններ կոնտրաստային նյութով	
1	Պարանոցի հետազոտություն	50 000
2	1 հատված	60 000
3	2 հատված	75 000
4	3 հատված	90 000
5	4 հատված	100 000
6	Ստամոքս-աղիքային հատվածի պերորալ հետազոտություն	55 000

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Invalid signature

X _____

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2018թ. նոյեմբերի 21
ք.Վանաձոր